



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17208

369

U-23

1861

2010

ՀԱՅԿ ԳԻՒՄՐԻ ԲԱՆԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԳՆԱԿԻ

ՏԵՂԵԿԵՐԻՐ

ՎԵՑԱՄՍԵԱՅ ՊԱՇՏՈՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ

ԱՐԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԵԿԱՆ ԽՈՐՀՐԳՈՅ

Ա.Բ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1861 ԱՊՐԷԼ 1

12001

369
Վ-23

Հ. Կոչկա

ՏՊԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՆՆԱՆՆԵՐԻ ՄԻՒՀԱՆՏԻՑԵԱՆ

19

23165

0.5.11.

25

369

Ա-23

(Handwritten signature)

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱԿՐԻՐ

ՎԵՑԱՄՍԵԱՅ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՈՒԹԵԱՆ

ԱՉԳԵՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ


Ա Ռ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԹՈՂՈՎ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

6455
30
5519

Ազգային սահմանադրութեան պարզ սկզբանցը համեմատ Տնտեսական խորհուրդը տասն անդամէ բաղկացած, և Քաղաքական ժողովքէն հաստատուած վարչութեան ատեան մը կազմելով ՚ի 19 Հոկտեմբեր 1860, սկսեց իւր շաբաթական և երբեմն արտաքոյ կարգի պատահական նիստերը շարունակել և Սահմանադրութեան կանոնը իրեն ուղեցոյց բռնելով՝ նախապէս հոգ տարաւ Տնտեսականին վերաբերեալ ազգային գործերը որոշել և հետեւաբար ճանչնալ իրեն պաշտօնն, ու անոր յատկացեալ պարտաւորութիւնները, որով Խորհուրդը իր վարչութեան առարկայները իսկապէս հասկցաւ, և անոնց կարգադրութեանը զբաղեցաւ, որոց բովանդակութիւնը համառօտիւ կը նշանակեմք:

Ա. Ազգային հաստատութեանց և կալուածոց ընդհանուր տեսչութիւնը, ու պայծառութեան և բարեկարգութեան հոգատարութիւնը:



Բ. Հիւանդանոցի մատակարարութեան

Գ. Անօրէից անուշու թեան

Դ. Կատկայ անօրէնութեան

մասնաւոր հոգարարձաններ հաստատելով գործադրութեան անօրէնութիւնը:

Ե. Ազգային ընդհանուր կալուածոց արտօնագիրներու և հէօժէիներո՝ օրինակները գիւնատան պահարանը յանձնելու գործողութիւնը:

Զ. Ազգային սր և է կալուածոց գներու և վաճառելու օրինաւոր արժանագատութիւնը:

Է. Ազգային սր և է կալուածոց և հաստատութեանց շինութեան և նորոգութեան արժանագատութիւնը:

Ը. Ազգային հաստատութեանց համար ստակ ժողովելու օրինաւորութեան արժանագատութիւնը:

Թ. Այլեղեցիականութեան գործերու համար թաղական խորհուրդներու հետ եղած յարաբերութիւնը և բանակցութիւնը, ըստ 65^{րդ} յօդ. Սահմանագրութեան:

Առաջարկեալ ինը գլխաւոր մասունքները և անոնց սրտականեալ զանազան իրողութեանց հանգամանքները մէջ բերելով Տնտեսական խորհուրդը արժան դատեց Հիւանդանոցի մատակարարութեան հոգը ամենուն նախագասել և իր բոլոր գիտողութիւնը աւնոր վրայ ամփոփել՝ զորն որ անկարելի էր վերացական խորհրդածութեամբ կանոնաւորել ու ապագայ բարեկարգութեան մը սպասել, ըստ որում նոյն աստուածահաճոց հաստատութեան մէջ պատասպարեալ եղիկել ազգայինք ամենատեսակ խղճութեամբ կը տանապէին, մէկ կողմէն աւօրեայ պարէնից և կարեւոր պիտոյից պակասութիւնը, և միւս կողմէն հասոյթներուն նրւազութիւնը և գործարանաց՝ այն է մոմարանին և տըպարանին լքեալ ամալի կացութիւնը՝ իրական նպաստ կը պահանջէին:

Աւստի Վաղարշական ժողովքէն հրաման ընդունելով՝ Աէվրուղեանց սենեակը աւանդ եղած ազգային

Ճեմարանի առձեռն պատրաստ ստակէն Ալմտական
Խորհուրդին ձեռօք 40000 զւռուշ փոխառու թեամբ
առժամանակեայ պիտոյքը փութապէս հոգացուեցաւ ,
և ապա անմիջապէս եօթն հոգաբարձուներ ընտրուե-
լով ապագայ բարեկարգ մատակարարութեան սկզբ-
նաւորութիւնը եղաւ , և պարտուպատշաճ այցելու-
թիւնները թէպէտ և տեղի ունեցան և կը շարունա-
կեն , սակայն ՚ի նուազութե՛նէ դրամոց երբեմն կազն ՚ի
կաղ կրնթանայ . ՚ի վերայ այսր ամենայնի՛ յուսալի է
յաջողութեամբ Տեառն հասոյթներու շարունակու-
թիւնը և առատաձեռն բարերարոց նպաստաւորու-
թիւնը , որով կատարեալ բարեկարգութիւն և եր-
ջանկաւէտ վայելչութիւն կը մշանջենաւորէ , նոյն
Սուրբ օթեւանին մէջ :

Ըստ կարգի Վանօրէից Տեսչութեան կազմութիւնը
թէպէտ և երրորդ և բնականապէս ամենակարեւոր
խնդիր մը բլլալով՝ անոր սկզբնաւորութիւնը և միան-
գամայն գործակալներուն ընտրութիւնը փութացնել
բղձալի էր Խորհրդոյս և նուիրական պարտք , բայց տա-
կաւին Վաւառական Խորհուրդները անկազմ՝ բլլալով՝
այս նիւթիս վրայօք թղթակցութեան առիթ չունե-
ցաւ Խորհուրդը , ուստի և Վանօրէից Տեսչութեան
կազմութիւնը որչափ որ անգործադրելի մնաց , սակայն
Խորհուրդը ուշադիր է այդ մասին յառաջիկայս փու-
թով ըստ Սահմանադրութեան ՚ի գործ դնելու :

Կրտակաց մինչեւ ցարդ տեղի ունեցած անպատե-
հութիւնները բարեկարգել , և պարտուպատշաճ կա-
նանադրութիւնը հաստատելու համար , նոյն պաշտօ-
նին յատկացեալ երեք քահանայէ և չորս աշխարհա-
կանէ բաղկացեալ Տնօրէն Խորհուրդը կազմուեցաւ ,
և արդէն իրենց պաշտօնին վերաբերեալ հիմնական
կանանագիրը յօրինած և Խորհրդոյս յանձնուած բլլա-
լով , ներկայ տեղեկագրովս կը մատուցանեմք Քաղա-

քական Դողովոյդ աս ՚ի վաւերացնել, և սպագբու-
թեամբ ՚ի ըյս ընծայել ՚ի տեղեկու թիւն ազգայնաց :

Ազգային կալուածոց արտօնագիրներու և Էնօճէթ-
ներու կամ Էնէֆներու օրինակները ժողովել և Վիւաւ
նատան պահարանը յանձնելու խնդիրը՝ նախագիտ Վ. Գ.
գային Վիւանատան կազմութեանը, և սպա Քաղա-
քական Ժողովքի որոշմամբ Սրբազան Վատրխաբքի ընդ-
հանրական յայտարարութեանը կարօտ էր, և արդէն
ժամանակի կարծութեան պատճառաւ հասարակու-
թիւնը անհմուտ ըլլալուն՝ սպագայ ժամանակի թող-
ուեցաւ :

Ազգային շինութեանց և նորոգութեանց, գնելոյ
և վաճառելոյ գէպքերը՝ պատահեցաւ որ՝ Տնատա-
կան խորհրդոյս չառաջարկուած, մասնաւորաց ծա-
խիւք ՚ի գործ գրուեցան սահպողական պէտքերու նը-
կատմամբ, սակայն խորհուրդը յետ այս պէտք եղած
ազդարարութիւնը ընելով (Թաղական խորհրդոց՝ պի-
տի հսկէ ամեն ազգային շինութեանց, որ ըստ կամս
Թաղականաց ՚ի գործ չգրուին. և ամանք խորհրդոյս
գիտութեամբ և Քաղաքական Դողովքին հաւանու-
թեամբ գործադրուեցան, որոց և այլ գործերու բո-
վանդակութեան ցանկը տեղեկագրութեանէս զատ հա-
մառօտիւ նշանակուած է :

Նստերունչ որբ աղայոց համար Սուրբ Փրկչի Վա-
նուց մէջ հաստատուած վարժարանը, զորն որ նախկին
կառավարիչները սր և իցէ գիտաւորութեամբ Փրկչեան
Ղեմարան անուանելով՝ թողակաւոր և ձրի աշակեր-
տաց խուռն բազմութիւն մը ընդուներ էին. և որով
ոչ միայն տեղւոյն ընդարձակութեան սահմանը ան-
ցած, այլ և տարօրինակ ծախուց առաւելութեամբ,
իր նպատակին հասնելու միջոցներէն զրկուած, և ա-
մենակարեւոր պիտոյից պակասութիւններէն վերջին

կարօտու թեան մէջ կը տագնապէր . ուստի այժմեան հոգաբարձու թիւնը ըստ Սահմանադրութեան նոյն վարժարանը կարելի չափաւորութեան մը տակ դնելու նպատակաւ , Սուրբ Օննդեան միջոցը ամսոյ մը չափ պարապոյ ժամանակ , նոյն տեղի աշակերտեալներէն մեծագոյն մաս մը՝ որ անկարօտ էին , իրենց թաղերուն վարժարանները խրկել տուաւ , ու յետոյ ընդունելութեան ժամանակ ալ անաչառ քննութեամբ՝ թէ բնիկ և թէ դրսեցի որբ և անտերուն չներէն՝ կամ անօգնական ծնողաց զաւկրներէն , 150 տղայի չափ միայն կրկին ներս ընդունելով , անոնց պիտոյիցը և կարգադրութեանցը վերահաստատութիւնը ՚ի գործ դրաւ . բայց և այսպէս չափազանց տրտունջները և տաղտկացուցիչ թախանձանքները պարտաւորեցին զՏնտեսականս վերստին ընդունել տալու նաև ուրիշ աղքատիկներ ալ՝ որոնք խիստ կարօտեալ էին , և որոնք որ թաղական խորհուրդներէն և պանդուխտ ազգայիններէն առաջարկուեցան . ուստի վարժարանին սահմանը արդէն լցուած՝ 200 տղայէն աւելի պատասպարելով՝ և չափազանցելու վիճակին հասած ըլլալով՝ այս մասին անօրէնութեան մը կարօտ ըլլալը հոգաբարձուներէն առաջարկուեցաւ . բայց ժամանակի կարճութիւնը՝ և նոյն իսկ աշակերտաց անընդհատ յաճախելը տեսնելով Տնտեսականք , միայն այսչափ մը ընել յարմար դա տեսցին՝ որ իւրաքանչիւր եկեղեցի Սրբազան Պատրիարքէն յատուկ ծանուցագրեր խրկուելով , թաղական խորհուրդներէն խնդրուեցաւ , որ նոյն որբոց և աղքատաց վարժարանին արդի բազմութեանը վրայ կրկին չափազանցութեան պատճառ չտալու համար , իրենց թաղական դպրոցներուն մէջ այնպիսիները պատասպարեն . մինչև որ Մզբը յարմար ժամանակի մէջ կարենայ օգտակար անօրէնութիւն մը ընել այնպիսեաց համար ալ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

Ազգային հին պարտուց քանակութիւնը ճշգիւ գիտնալու համար՝ անանկ պատեհութիւն մը չունեցաւ Խորհուրդը որ հաշուեցուցականերուն ամեն մէկ մասը զատ զատ քննութեան առներ, բայց և այնպէս այդ քննութիւնը Ալմուսական Խորհուրդը կատարեց՝ և անցեալ դեկտեմբեր ամսոյ մէջ Տնտեսականին հաղորդած բովանդակութեան նկատմամբ 1047376 զուռուշի չափ կը հասնի, զորն որ քանի մը տարիէ ՚ի վեր ազգային սովորական արոց զլացմանէն գոյացած ըլլալով, Քաղաքական ժողովը սոյն պարտուց գումարը մասնաւոր նուէրներով վճարելու որոշմունքն ըրաւ, որով և Ազգային Սահմանադրութեան ընթացքը գիւրացընելու բարեհաճեցաւ. այսու ամենայնիւ Քաղաքական ժողովոյն կողմանէ պարտապահանջները և աղքատ ազաւորները Խորհրդոյս յանձնուելուն համար՝ պարտապահանջներու խուռն բազմութիւնը, և անոնց անընդհատ երթևեկութիւնը մինչ այն աստիճան կը թախանձէին զՏնտեսականս, որ անկարելի եղաւ Խորհրդոյն ուրիշ կարեւոր անօրէնութիւններու մասին Խորհրդու և ձեռն ՚ի գործ արկանելու, ուստի Քաղաքական ժողովրէն յատուկ յայտագրով մը խնդրուեցաւ՝ որ 10 Անգամներէ բազկացեալ յանձնաժողով մը կազմելու անօրէնութիւնը ըրաւ ՚ի մօտոյ, որով Տնտեսականը ազաւ են յետ այսորիկ ազգային պարտապահանջներու թախանձանքէն:

ԱՅԺՄԵԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՈՒԹԻՑ ԵՒ ԾԱԽՈՒՑ
ՀՒՒԱՆԴԱՆՈՑԻՆ

Հիւանդանոցի սեփական հասոյթներուն բովանդակութիւնը նախընթաց տարիներու արդեանց բազգաատելով Ալմուսական Խորհուրդը Տնտեսականին ներ-

կայացոյց իբր 771658 զուսուշ համարելով, որուն մա-
տակարարութիւնը 1861 յուվար 1էն Տնտեսականին՝
կամ անոր պատասխանատուութեան ներքեւ՝ Հիւան-
դանոցի Հոգաբարձուներուն կը յանձնէ, և ընդհա-
նուր վերադիտողութիւնը իրեն պահելով, ամեն ամիս
մօտից և ծախուց մասնաւոր հաշուեցուցակները Տըն-
տեսական խորհրդոյն վաւերական հաստատութեամբ
Ելմտականին տալ կը հարկադրէ. բայց չի բացատրեր այն
անկարելի հարկադրութեան բուն նպատակը ինչ է,
ըստ որում Հիւանդանոցի սեփական հասոյթները
Ելմտականէն ընդհանրապէս զապուած ու Հիւան-
դանոցի տեսչութեան յանձնուած է Տնտեսականին
պատասխանատուութեամբը, ուրեմն մինչ տարեգլուխ
վերադիտողութիւնը Տնտեսականին վերաբերեալ ըւ-
րալով ապրեկան ամբողջ հաշիւը պիտի ներկայացընէ
Ելմտականին, ինչպէս որ ներկայացընելու կը պարտա-
ւորէ Սահմանադրութիւնը ամեն Վարչութիւն ըստ
52 յօդուածոյն, առ ՚ի բովանդակել ազգային ընդհա-
նուր մուտքն ու ելքը, և այլն: Արդ ըստ այնմ ան-
կարելի կը թուի որ ամեն ամիս Հոգաբարձուները
Տնտեսականին և Տնտեսականը Ելմտականին մանրա-
մասն և միանգամայն անթերի հաշիւ տայ. այն, կրնայ
տալ և կարելի է միայն թերակատար հաշիւ տալ և
այն ՚ի կարեւոր դէպս և կամ հրաժարման պարագա-
ներու մէջ, եթէ պատահի, և ոչ հաշուետու մար-
կանոնաւորելու համար, փասն զի թերակատար հա-
շիւները կեդրոնական մայր հաշուետու մարներուն
մէջ տեղ չունին ըստ մեր կարծեաց:

Այս նախընթաց յօդուածին պէս կան ուրիշ խրն-
դիրներ որ Սահմանադրութեան մէջ համառօտ սկըզ-
բանց վրայ միայն հիմնած ըլլալով, ասանց ճիշդ սրտ-
շունն ու բացատրութիւնները մեկնութեան կարօտ
ըլլալով, յառաջ քան զայս Տնտեսական խորհուրդս
Քաղաքական ժողովքէն խնդրեց, և բացատրութիւնը
արժան դատուեցաւ. այլ մինչեւ ցարդ ՚ի գործ դրը

ուած չըլլալով կրկին կը խնդրէ Տնտեսական խորհուրդս Քաղաքական ժողովէն որ Սահմանադրութեան հիմնադիր Յանձնարարական ժողովոյն գումարմամբ շնորհ ընէ՝ այնպիսի բացորոշ հրահանգներ պատրաստելու, որով խորհուրդները դիւրութեամբ յառաջ տանին իրենց վարչութիւնը ապագայ ժամանակին :

Հիւանդանոցի Հոգաբարձութիւնն ալ արդէն իր յատուկ տեղեկագիրն պատրաստած ըլլալով կը մատուցանէ Քաղաքական ժողովոյդ, որմէ լուազոյն պիտի խնայուի Սուրբ Փրկչի վանուց այժմեան վիճակը, և օրինաւոր կառավարութեան ընթացքը :

Ազգային վարչութեան Տնտեսական խորհրդոյն հաստատութենէն 'ի վեր առանձին իւր ատեանին առաջարկեալ 157 խնդիրներէն գլխաւոր մասանց բովանդակութիւնը համառօտիւ նշանակել տեղեկագրոյս մէջ արժան գատեցու :

1. Տնտեսական խորհուրդը իւր առաջին նիստին մէջ 'ի 19 Հոկտեմբեր 1860, գաղտնի քուէից արգեամբ իւր Միւսնը կազմեց :

2. Ի Հոգաբարձութիւն Հիւանդանոցի 21 անուանց վրայ գաղտնի քուէ ձգելով ընտրեց եօթը Հոգաբարձու, որոնք հաստատուեցան Քաղաքական Ժողովոյ հաճութեամբ, և Սրբազան Պատրիարքի ծանուցական նամակաւ :

3. Ազգային Հիւանդանոցի կարեւոր պիտոյքը հագցուելու համար 40 հազար զուռուշի փոխառութիւն մը՝ Այվրուզեանց սենեակին աւանդ տրուած Ղեմարանի ստակէն ընելու առաջարկութիւնը Քաղաքական Ժողովէն ընդունուելով 'ի ձեռն Լշմոական խորհրդոյն կատարուեցաւ : Թ. 5 :

4. Ազգային պարտուց հատուցման համար ըլլալիք փոխառութեանց վրայով, համառօտ տեղեկագիր մը Տնտեսական խորհուրդը ընդ Լշմոականին առաջարկեց Քաղաքական Ժողովոյն, որ և հաճութեամբ ընդունուեցաւ : Թ. 11 :

5. Հիւանդանոցի այգին վարձու տրուելու համար Հոգաբարձուաց հետ խորհրդակցութեամբ, շահաւոր կերպով ՚ի գործ դրուեցաւ : Թ. 12 :

6. Տնտեսական խորհուրդը Քաղաքական Եղբայրացիներէն, որ Սահմանագրութեան յանձնաժողովը յօրինէ Տնտեսական և Աշխատանքի խորհրդոց պաշտօններուն հրահանգները բացատրութեամբ հանդերձ, և այլն : Թ. 15 :

7. Տնտեսական խորհուրդը ՚ի 6 նոյեմբերի, արդոյ Հոգաբարձուաց հետ յատուկ այցելութիւն ընելով ՚ի Սուրբ Փրկիչ, նորին ներքին վիճակը քննեց, և կահուց կարասեաց, հանդերձից և ուտեստի մեծ պակասութիւնները նկատելով, կարելի եղած անօրէնութիւնները ՚ի գործ դրաւ Հոգաբարձուաց ձեռք : Թ. 22 :

8. Աշխատանքի Աշխատանքային կցորդ եղած կալուածներէն փոքրիկ գետնի մը վերաբերեալ վէճը, նոյն տեղի Թաղական խորհուրդին յանձնուեցաւ, Աշխատանքային շահաւոր կերպով լիննալու համար : Թ. 29 :

9. Ինքնաշարժ դուռը պաշտօններութեան դրվելու անձ մը պէտք ըլլալով, հաւատարիմ և ժրաջան պաշտօնեաց մը դրուեցաւ, Այգային ճամբորդներուն գիւրութիւնները ըստ օրինի հոգացուելու համար : Թ. 32 :

10. Քաղաքական Եղբայրացիներ և Տնտեսական խորհուրդն եղած յանձնարարութեան համաձայն, Այգային արոց և նպաստից համար ընկալագրոց տոմսակներ սպագրել տալով Աշխատանքի խորհրդոյն յանձնեց : Թ. 34 :

11. Տնտեսական և Աշխատանքի խորհրդոց անօրէնութեան և գրութեանց վաւերականութեանը համար, Քաղաքական Եղբայրացիներէն հաճութեամբ երկու կնիք փորագրել տուաւ. այսօրինակ՝ Այգային վարչութեան Տնտեսական և Աշխատանքի խորհուրդ : Թ. 38 :

12. Հիւանդանոցի Հոգաբարձուներէն առաջարկեալ Անաստաս Տիկնանց Աշխատանքային կազմուելու

համար, Տնտեսական խորհուրդն իր հաւանութիւնը տալով՝ Քաղաքական Ժողովոյն տեղեկագիր մը ներկայացուց, և նորին հաճութեամբը հաստատուեցաւ : Թ. 39 :

13. Խնամակալ Տիկնանց Բնկերութեան ստորագրեալ առաջարկութիւնը 'ի ձեռն Տնտեսական խորհրդոյն ներկայացաւ Քաղաքական Ժողովոյն, որ ընդունելով և վաւերացրնելով Սրբազան Պատրիարքին կողմանէ յատուկ օրհնութեան նամակներով հրաւերեղաւ աղքատասէր մեծազգի Տիկնանց, և այլն : Թ. 40 :

14. Կրօնի վերաբերեալ գործողութեանց հոգաբարձութիւնը կազմուեցաւ ըստ Սահմանագրութեան, և 21 ընտրեալ անձերէ գաղանի քուէիւք որոշուեցան 7 անձինք՝ 3 քահանայ և 4 աշխարհական, որոց ընտրութիւնը հաստատուեցաւ Քաղաքական Ժողովոյ հաճութեամբ : Թ. 64 :

15. Ըստ առաջարկութեան Հոգաբարձուաց՝ Աբ Փրկչի տպարանը 12 հազար զուրուշ տարեկանով վարձքի տալը առ այժմ չահաւոր համարելով, Տնտեսական խորհուրդը իր հաւանութեամբը հաստատուեց, և այլն : Թ. 66 :

16. Ըզգային հին պարտուց վճարման համար, և նոր տարւոյն առւրքերը հաւաքուելու համար՝ Քաղաքական Ժողովոյն հաստատած յանձնաժողովին, և այլն, Տնտեսական խորհրդէն երկու անդամոց ընտրութեան ծանօթագիրը Քաղաքական Ժողովոյն տրուեցաւ : Թ. 80 :

17. Ելքմական խորհրդէն առ Տնտեսական ուղղեալ տեղեկագրին համեմատ՝ տարեկան ելից և մոխր գործադրութեան համար, հասցիներու ցուցակը պաշտօնական արտօնագրով մը հոգաբարձուաց յանձնեցաւ : Թ. 99 :

18. Փրկչի մամտան մայրաքաղաքիս եկեղեցիներէն ունեցած պահանջքին նկատմամբ՝ հոգաբարձուաց կարեւոր առաջարկութիւնը օգտակար համարելով, Տնտեսական խորհուրդը հաճեցաւ որ եկեղեցիներէն

նոյն պարտքերը հոգաբարձուք ժողովէն, և հիւանդա-
նոցին կարօտութիւնը հոգան, պապային եղած հա-
սցթներէն կրկին վճարելով մամատան պահանջները,
որում և Քաղաքական ժողովոյ հաւանութեամբ, Սրբա-
բազան Պատրիարքէն ամեն եկեղեցի ծանուցագիր գը-
նայ՝ պարտքերնին ստիպաւ հոգաբարձուաց վճարելու
և այլն : Թ. 99 :

19. Փրկչեան վարժարանին տղոց թիւը 200 էն
անցնելով, Քաղաքական ժողովոյն տեղեկագիր տրուե-
ցաւ, որով Սրբազան Պատրիարքէն ծանուցագիր խըր-
կուեցաւ ամեն թաղական խորհրդոյ, և այլն :

20. Իւսկիւտար Սուրբ Խաչ եկեղեցւոյ թաղական
խորհրդէն առաջարկեալ տեղեկագրին համեմատ, նոյն
թաղին նորաչէն դպրոցին բազմաթիւ պարտքը վճա-
րուելու համար, հին դպրոցը որ բնակութեան տուն
մըն էր, արժանաւոր գնով ծախուելուն, Քաղաքական
ժողովոյ գիտութեամբ հաճութիւն տրուեցաւ գործա-
ծադրութեան : Թ. 110 :

21. Ազգաինամ ճարտարապետ Ամիրային Այլովայի
կողմերը ստացած կալուածները արդէն Ազգին յանձ-
նելով ժառանգաւորաց դպրոցին հասցթ պատրաստե-
լու համար, և նոյն կալուածական գործերու կարգադ-
րութիւնը փութով ՚ի գործ դրուելու համար Քաղա-
քական ժողովոյն տեղեկագիր տրուեցաւ, որ Սրբա-
զան Պատրիարքին կողմանէ ծանուցագիր խրկուի Ար-
մաշու սրբազան Առաջնորդին, որ Այլովա իջնայ նոյն
գործերուն գործադրութեանցը համար : Թ. 118 :

22. Տնտեսական խորհուրդն իր մեջէն յանձնաժո-
ղով մը կազմելով, պատրաստեց իր ատեանին կանո-
նադրութիւնը, որ արդէն խորհրդոյն հաւանութիւնը
ստացաւ նովիմբ վարվելու համար, և որ Քաղաքա-
կան ժողովոյն պիտի յանձնուի ՚ի քննութիւն և ՚ի վա-
ւերականութիւն : Թ. 125 :

23. Իւրաքանչիւր թաղական խորհրդոց գործածելու
սեպհական կնիքները մաքուր և միօրինակ ըլլալու հա-

մար յատուկ ուրուագիծ մը շինել տուաւ Տնտեսական
խորհուրդս . գործը ճարտար փորագրիչ Պ. Մկրտիչին
յանձնեց , որ և հետզհետէ պատրաստածները Տնտե-
սական խորհուրդին յանձնելով ամեն Թաղական խոր-
հրդոց պիտի յանձնուի՝ իւրաքանչիւրոց գիները ու-
րոյն ուրոյն նշանակելով որ վճարեն . և այլն :

Աւելորդ կը համարիմք այլ ևս մանրամասն խնդիր-
ներու վերաբերեալ տեղեկագրու թիւններ յարակցե-
լու , բաւական կարծելով վերոգրեալ համառօտու-
թիւնը , որ ընդ ամենայն հինգ վեց ամսոյ մէջ Տնտե-
սական խորհուրդը իր անձնուէր աշխատութիւնը ըստ
կարեաց մատուցանելով Ազգին , գոհութեամբ սրտի
կը փութայ յայտնել իւր շնորհապարտութիւնը պատ-
կառելի Ինդհանուր ժողովոյ առջեւ թէ Ամենապա-
տիւ Սրբազան Պատրիարքին և Բաղաբական ժողովոյն ,
և թէ Ազգային բոլոր խորհուրդներուն , որոց ամե-
նուն համակրութիւնը զօրութիւն մը եղած է խոր-
հրդոյս , ուստի և յետ այսր Ազգիս յաջողուածոյն և
երջանիկ բարօրութեանը ջերմեռանդ ոգւով կը մնամք
միշտ անձնանուէր բարեմաղթք :


ԱՆԴԱՄՔ 'ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

- Հ. ԱԼԹՈՒՆՃԵԱՆ
- Պ. ԱՇՆԱՆԵԱՆ
- Գ. ԿՈՍՏԱՆԴԵԱՆ *ապիւստոս*
- Մ. ՃԱՓՃԱՓԵԱՆ
- Մ. Գ. ՄԻԻՀԵՆՏԻՍԵԱՆ
- Մ. Ս. ՉՕԼԱԳԵԱՆ
- Յ. ԳՈՒՐԱԻՆՍՈՒՋԵԱՆ
- Գ. ՏԵՐ ԳՕՂՈՍԵԱՆ *ապիւստոս*
- Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

1861 ԱՊՐԻԼ 1

Ազգային Պատրիարքարան Հայոց
Ի Կ. Պօլիս :





25

